հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերության տնօրեն, հարկերը վճարելուց խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցրելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկղ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 23.841.935 ՀՀ դրամ հարկի գումար»:

Արթուր Գալստյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 205-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, 2009թ. օգոստոսից հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ Էնթրփրայզս» ՍՊ ընկերության գլխավոր հաշվապահ, խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, ընկերության փաստացի ղեկավար, այնուհետև տնօրեն Նարեգ Կարապետի Հարթունյանի անմիջական ցուցումով հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու, ապա նաև ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացնելու միջոցով խուսափել է խոշոր չափի՝ 12.481.956 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց: Բացի այդ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով ընկերության հաշվապահ, ընկերության գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն Անի Մնացականյանի հետ օժանդակել են ընկերության տնօրեն Նարեգ Հարթունյանին՝ հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 23.841.935 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելուն:

Այսպես, «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերությունը 2009թ. օգոստոս ամսից Ռուսաստանի Ղաշնության Չելյաբինսկ քաղաքի «Գրիգորովիչի» անվան սննդի կոմբինատից Հայաստանի Հանրապետություն է ներմուծել պարենային ապրանքներ, որոնք մատակարարների միջոցով իրացվել են ՀՀ տարածքում գտնվող տարբեր ընկերությունների:

Այդ ժամանակահատվածում ընկերության ամբողջ գործունեությունը փաստացի ղեկավարող և կազմակերպող Նարեգ Հարթունյանի անմիջական ցուցումով, ընկերության հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանը 2009թ. օգոստոսից մինչև 2010թ. սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցրել է, դրանք ամբողջությամբ չի մուտքագրել ընկերության դրամարկղ, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չի փաստաթղթավորել, ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չի կնքել և այդ եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ

խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափերով՝ 12.481.956 ՀՀ դրամ հարկի գումար:

Այնուհետև, 2010թ. սեպտեմբերի 11-ից Նարեգ Հարթունյանը, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերության տնօրեն, հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցնելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկղ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 23.841.935 ՀՀ դրամ հարկի գումար»:

Անի Մնացականյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ Էնթրփրյազ» ՍՊ ընկերության գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ընկերության գլխավոր հաշվապահ, այնուհետև հաշվապահ Արթուր Արամի Գալստյանի հետ օժանդակել են ընկերության տնօրեն Նարեգ Հարթունյանին՝ հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 23.841.935 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելուն:

Այսպես, 2010թ. սեպտեմբերի 11-ից Նարեգ Հարթունյանը, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ Էնթրփրյազ» ՍՊ ընկերության տնօրեն, հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցնելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկղ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 23.841.935 ՀՀ դրամ հարկի գումար:

Անի Մնացականյանը Նարեգ Հարթունյանին օժանդակել է ընկերության հաշվապահ Արթուր Գալստյանին առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու վերաբերյալ հանձնարարություններ տալու, ինչպես նաև թաքցված

շրջանառությունից առաջացած գումարները հավաքելու ու տնօրենին տալու եղանակներով»:

Առաջադրված մեղադրանքներում իրենց մեղավոր չճանաչելով հանդերձ, ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանը, Արթուր Գալստյանը և Անի Մնացականյանը հայտնեցին, որ ամբողջությամբ վերականգնել են պետությանը պատճառված վնասը, ինչպես նաև հաշվարկված տույժերն ու տուգանքները:

Հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, պաշտպաններ Հայկ Ալունյանը և Գևորգ Զաքմիշյանը միջնորդեցին ամբաստանյալների նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը:

Ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանը, Արթուր Գալստյանը և Անի Մնացականյանը միացան միջնորդությանը:

Մեղադրող Բագրատ Պետրոսյանը չառարկեց միջնորդության դեմ: Քննության առնելով միջնորդությունը դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

2013թ. դեկտեմբերի 16-ի թիվ 4579, թիվ 4802, թիվ 4907 և թիվ 4935 վճարման հանձնարարականների համաձայն՝ ամբաստանյալները վճարել են 63.104.019 դրամ գումար, որը ներառել է շահութահարկը, ԱԱՀ-ն, եկամտահարկը և սոցվճարները՝ հաշվարկված տույժերով և տուգանքներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդում չի կարող իրականացվել, եթե անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Նարեգ Հարթունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-205-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալ Արթուր Գալստյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 1-ին մասով և ամբաստանյալ Անի Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել, իսկ նրանց նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, պետք է վերացնել:

Քննության առնելով իրեղեն ապացույցների տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ թվով 8 համակարգիչները պետք է վերադարձնել «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզիս» ՍՊ ընկերությանը, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի ՀՏ ներկայացված 2009 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների, 2010 թվականի և 2011 թվականի հունվարից մինչև մարտ ամիսների ԱԱՀ-ի հաշվարկներն ու հաշվետվությունները, ինչպես նաև ընկերության աշխատակիցներին աշխատանքի ընդունելու, աշխատավարձերի չափերի և աշխատանքից ազատելու մասին թվով 11 հրամանները պետք է թողնել քրեական գործում: Նկատի ունենալով, որ ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանի, Արթուր Գալստյանի և Անի Մնացականյանի կողմից պատճառված վնասներն ամբողջությամբ վերականգնելու հետևանքով վերացել է ինչպես վերջիններիս գույքի վրա, այնպես էլ «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզիս» ՍՊ ընկերությանն սեփականության իրավունքով

պատկանող Երևան քաղաքի Արարատյան փողոցի 90/8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը, դատարանը գտնում է, որ ամբաստանյալների և «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության գույքի վրա դրված կալանքը պետք է վերացնել:

Վերոգրյալի հիման վրա՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ, 189-րդ հոդվածները, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 119-րդ, 238-րդ և 313-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Նարեգ Կարապետի Հարթունյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 1-ին մասով:

Նարեգ Հարթունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

Արթուր Արամի Գալստյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 205-րդ հոդվածի 1-ին մասով:

Արթուր Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

Անի Սերժիկի Մնացականյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով:

Անի Մնացականյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

Իրեդեն ապացույցներ հանդիսացող թվով 8 համակարգիչները վերադարձնել «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերությանը, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի ՀՏ ներկայացված հաշվարկներն ու հաշվետվությունները, ինչպես նաև թվով 11 հրամանները թողնել քրեական գործում:

Նարեգ Հարթունյանի, Արթուր Գալստյանի և Անի Մնացականյանի գույքի վրա, ինչպես նաև «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերությանն սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արարատյան փողոցի 90/8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ԱԶԱՐՅԱՆ

Կարճման հիմք:

Անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից

Օրենսգիրք:

Քրեական օրենսգիրք

Ամսաթիվ:

17-12-2013

Այլ նշումներ:

Ամսաթիվ:

17-12-2013

Հոդված

Հոդված

190

Մաս 2

Կետ 1

Այլ նշումներ:	
Ամբաստանյալ	
Անուն	Նարեգ
Ազգանուն	Հարթունյան
Հայրանուն	Կարապետի
Հասցե	ք. Երևան, Վարդանանց փողոց, 16/1 շենք, բնակարան 1
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	16-07-1966
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Ամսաթիվ: 17-12-2013	
Հողված	
Հողված	38-190 Մաս 2 Կետ 1
Այլ նշումներ:	
Ամբաստանյալ	
Անուն	Արթուր
Ազգանուն	Գալստյան
Հայրանուն	Արամի
Հասցե	ք.Երևան, Լվովյան փողոց 19 շենքի 87 բնանական
Ծննդյան ամսաթիվ	18-09-1978
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Ղատական ակտի բովանդակությունը:	<p>գործ No. ԵՇԴ-0008/01/12</p> <p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը</p> <p>նախագահությամբ դատավոր Ա.ԱԶԱՐՅԱՆԻ քարտուղարությամբ Լ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ մասնակցությամբ՝ մեղադրող Բ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ պաշտպաններ Հ.ԱԼՈՒՄՅԱՆԻ ամբաստանյալներ Ն.ՀԱՐԹՈՒՆՅԱՆԻ Ա.ԳԱԼՍՅԱՆԻ</p> <p>2013թ. դեկտեմբերի 17-ին դատարանում՝ դռնբաց դատական նիստում, քննեց գործն ըստ մեղադրանքի. 1. Նարեգ Կարապետի Հարթունյանի՝ ծնված 16.07.1966թ. Բեյրութում, հայ, ԱՄՆ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ մեկ անձ, «Ջի էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության տնօրեն, նախկինում չդատված, բնակվում է</p>

ք.Երևան, Նոյ թաղամասի թիվ 152 տանը, խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:
2. Արթուր Արամի Գալստյանի՝ ծնված 18.09.1978թ. Երևանում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ երկու անձ, նախկինում չդատված, հաշվառված է ք.Երևան, Լվովյան փողոցի 19-րդ շենքի թիվ 87 բնակարանում, բնակվում է ք.Երևան, Լվովյան փողոցի 13-րդ շենքի թիվ 119 բնակարանում, խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:
«Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության ղեկավար անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչություն օրենքով սահմանված հաշվետվություններում, հաշվարկներում և հարկման համար հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Մկրտչյանի 2011թ. հունիսի 20-ի որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, հարուցվել է թիվ 83102411 քրեական գործը:
2011թ. դեկտեմբերի 9-ին Նարեգ Հարթունյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա հանդիսանալով «Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության հիմնադիր-սեփականատեր Գարաբեդ Հարթունյանի որդին, 2009թ. օգոստոս ամսից մինչև 2010թ. սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում փաստացի ղեկավարել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչությունում հաշվառված «Ջի Էյջ Ստորիջ Էնթերփրայզս» ՍՊ ընկերության գործունեությունը և այդ ժամանակահատվածում կազմակերպել է ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Արամի Գալստյանի կողմից ընկերության հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 25.278.175 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելուն:
Այնուհետև՝ 2010թ. սեպտեմբերի 11-ից, հանդիսանալով ընկերության տնօրեն, Նարեգ Հարթունյանը ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի և գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:
Այսպես, «Ջի Էյջ Ստորիջ» ՍՊ ընկերությունը 2009թ. օգոստոս ամսից Ռուսաստանի Դաշնության Չեյաբինսկ քաղաքի «Գրիգորովիչի» անվան սննդի կոմբինատից Հայաստանի Հանրապետություն է ներմուծել պարենային ապրանքներ, որոնք մատակարարների միջոցով իրացվել են ՀՀ տարածքում գտնվող տարբեր ընկերությունների:
Այդ ժամանակահատվածում ընկերության ամբողջ գործունեությունը փաստացի ղեկավարող և կազմակերպող Նարեգ Հարթունյանի անմիջական ցուցումով, ընկերության հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանը 2009թ. օգոստոսից մինչև 2010թ. սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցրել է, դրանք ամբողջությամբ չի նուտքագրել ընկերության դրամարկղ, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չի փաստաթղթավորել, ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված

կարգով աշխատանքային պայմանագրեր չի կնքել և այդ եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորել խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 25.278.175 ՀՀ դրամ հարկի գումար:

Բացի այդ, 2010թ. սեպտեմբերի 11-ից Նարեգ Հարթունյանը, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերության տնօրեն, շարունակել է իր հանցավոր գործունեությունը և հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցնելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկոլ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկի գումար:

Բացի այդ, Նարեգ Հարթունյանը, հանցավոր ճանապարհով ստացված վերոհիշյալ եկամուտների մի մասն օրինականացնելու դիտավորությամբ, հանցավոր ճանապարհով ստացված գումարներից խոշոր չափերով՝ 7.770.600 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլարի չափով, եկամուտներն օրինականացնելու, դրա ստացման աղբյուրը թաքցնելու, հանցավոր ծագումը խեղաթյուրելու և իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով «Ջի էյջ Ստորիջ Էնթրփրայզս» ՍՊ ընկերության դրամարկոլում չհաշվառված գումարներից 2010թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում ընկերության հաշվապահ Արթուր Արամի Գալստյանի միջոցով Սևակ Արայի Արգարունուն մաս-մաս վճարել է ընդհանուրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.770.600 ՀՀ դրամ և 2010թ. մայիսի 10-ին ձեռք է բերել վերջինիս պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Հովսեփյան փողոցի 14 հասցեում գտնվող տունը: Այդ գործողություններով Նարեգ Հարթունյանը հանցավոր ճանապարհով ձեռք բերված 7.770.600 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլարը փոխարկել է անշարժ գույքի»:

2011թ. դեկտեմբերի 9-ին Արթուր Գալստյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 2009թ. օգոստոսից հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ Էնթրփրայզս» ՍՊ ընկերության գլխավոր հաշվապահ, այնուհետև հաշվապահ, առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, ընկերության փաստացի ղեկավար, այնուհետև տնօրեն Նարեգ Կարապետի Հարթունյանի անմիջական ցուցումով հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու, ապա նաև ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացնելու միջոցով խուսափել է առանձնապես խոշոր չափի՝ 25.278.175 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Բացի այդ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն

ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով ընկերության հաշվապահ, ընկերության գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն Անի Մնացականյանի հետ օժանդակել են ընկերության տնօրեն Նարեգ Հարթունյանին՝ հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելուն:

Արթուր Գալստյանը Նարեգ Հարթունյանին օժանդակել է նաև հանցավոր ճանապարհով ստացված խոշոր չափերի՝ 7.770.600 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլարի եկամուտն օրինականացնելուն:

Այսպես, «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերությունը 2009թ. օգոստոս ամսից Ռուսաստանի Ղաչնության Չելյաբինսկ քաղաքի «Գրիգորովիչի» անվան սննդի կոմբինատից Հայաստանի Հանրապետություն է ներմուծել պարենային ապրանքներ, որոնք մատակարարների միջոցով իրացվել են ՀՀ տարածքում գտնվող տարբեր ընկերությունների:

Այդ ժամանակահատվածում ընկերության ամբողջ գործունեությունը փաստացի ղեկավարող և կազմակերպող Նարեգ Հարթունյանի անմիջական ցուցումով, ընկերության հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանը 2009թ. օգոստոսից մինչև 2010թ. սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցրել է, դրանք ամբողջությամբ չի մուտքագրել ընկերության դրամարկղ, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չի փաստաթղթավորել, ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չի կնքել և այդ եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 25.278.175 ՀՀ դրամ հարկի գումար:

Այնուհետև, 2010թ. սեպտեմբերի 11-ից Նարեգ Հարթունյանը, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերության տնօրեն, շարունակել է իր հանցավոր գործունեությունը և հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցնելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկղ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված, հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկի գումար:

Բացի այդ, Նարեգ Հարթունյանը, հանցավոր ճանապարհով ստացված վերոհիշյալ եկամուտների մի մասն օրինականացնելու դիտավորությամբ, հանցավոր ճանապարհով ստացված գումարներից խոշոր չափերի՝ 7.770.600 ՀՀ դրամին համարժեք

20.000 ԱՄՆ դոլարի չափով եկամուտներն օրինականացնելու, դրա ստացման աղբյուրը թաքցնելու, հանցավոր ծագումը խեղաթյուրելու և իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով «Ջի էյջ Ստորիջ Էներժիրայզ» ՍՊ ընկերության դրամարկղում չհաշվառված գումարներից 2010թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում ընկերության հաշվապահ, գանձապահի պարտականությունները կատարող Արթուր Արամի Գալստյանի օժանդակությամբ, վերջինիս միջոցով Սևակ Արայի Արզարունուն մաս-մաս վճարել է ընդհանուրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.770.600 ՀՀ դրամ և 2010թ. մայիսի 10-ին ձեռք է բերել վերջինիս պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Հովսեփյան փողոցի 14 հասցեում գտնվող տունը: Այդ գործողություններով Արթուր Գալստյանն օժանդակել է Նարեգ Հարթունյանին հանցավոր ճանապարհով ձեռք բերված 7.770.600 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլարը անշարժ գույքի փոխարկելու հարցում»:

2011թ. դեկտեմբերի 9-ին Անի Մնացականյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա հանդիսանալով ընկերության գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով փոխտնօրեն, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ընկերության գլխավոր հաշվապահ, այնուհետև հաշվապահ Արթուր Արամի Գալստյանի հետ օժանդակել են ընկերության տնօրեն Նարեգ Հարթունյանին՝ հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելուն:

Այսպես, 2010թ. սեպտեմբերի 11-ից Նարեգ Հարթունյանը, հանդիսանալով «Ջի էյջ Ստորիջ» ՍՊ ընկերության տնօրեն, շարունակել է իր հանցավոր գործունեությունը և հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ընկերության գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանի, գրասենյակային գործերի կառավարիչ, իսկ 2011թ. հունվարի 11-ից կազմակերպչական գործերով ընկերության փոխտնօրեն Անի Մնացականյանի օժանդակությամբ, 2010թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2011թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում, իրացման շրջանառության իրական ծավալները թաքցնելու, դրանք ամբողջությամբ ընկերության դրամարկղ չմուտքագրելու, վարձու աշխատողների վարձավճարների չափն ամբողջությամբ չփաստաթղթավորելու և ընկերության մի շարք աշխատակիցների հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր չկնքելու եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն ներկայացված հարկման համար հիմք հանդիսացող ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկներում ու հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և այդ եղանակով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 38.373.127 ՀՀ դրամ հարկի գումար:

Անի Մնացականյանը Նարեգ Հարթունյանին օժանդակել է ընկերության հաշվապահ Արթուր Գալստյանին առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու վերաբերյալ հանձնարարություններ տալու, ինչպես նաև թաքցված շրջանառությունից առաջացած գումարները հավաքելու ու տնօրենին տալու եղանակներով»:

2012թ. փետրվարի 23-ին Նարեգ Հարթունյանի, Արթուր Գալստյանի և Անի Մնացականյանի վերաբերյալ վերը նշված հոդվածներով քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատաքննության ընթացքում, 2013թ. մարտի 1-ի որոշմամբ նշանակվել է լրացուցիչ դատահաշվապահական փորձաքննություն

և ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետի 2013թ. օգոստոսի 5-ի թիվ 13-0142դ եզրակացության համաձայն՝ «Ջի էյջ Ստորիջ Էնթերփրայզ» ՍՊ ընկերության լրացուցիչ հարկային պարտավորությունները՝ ըստ առանձին հարկատեսակների և պարտադիր այլ վճարների, տույժ և տուգանքներով հանդերձ ընդամենը կազմում է 63.104.019 դրամ (հարկեր և պարտադիր այլ վճարներ՝ 36.323.891 դրամ, տույժ՝ 6.436.713 դրամ, տուգանք՝ 20.343.415 դրամ):

Դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների հիման վրա մեղադրողի 2013թ. դեկտեմբերի 16-ի որոշումներով փոփոխվել են հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու մասով ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված ամբաստանյալների առաջադրված մեղադրանքները, նրանց նոր մեղադրանքներ են առաջադրվել այդ հոդվածով, իսկ Նարեգ Հարթունյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և Արթուր Գալստյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, նախկինում առաջադրված մեղադրանքները վերացվել են:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ Նարեգ Հարթունյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-205-րդ հոդվածի 1-ին մասով, Արթուր Գալստյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 1-ին մասով և Անի Մնացականյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական հետապնդումները դադարեցվել են: Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանին և Արթուր Գալստյանին առաջադրված մեղադրանքները մեղադրողի կողմից վերացնելու հարցին, դատարանը նշված փաստը դիտում է որպես մեղադրողի կողմից մեղադրանքներից հրաժարում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին:

Ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանին և Արթուր Գալստյանին առաջադրված մեղադրանքների վերացումը մեղադրողը պատճառաբանել է այն հանգամանքով, որ «դատաքննությամբ հետազոտված ապացույցներով պարզվել է, որ «Ջի էյջ Ստորիջ Էնթերփրայզ» ՍՊ ընկերության չիրկիզվող պահարանում պահվել են ոչ միայն ընկերության գործունեության արդյունքում ստացված դրամարկղի կանխիկ գումարները, այլև՝ ընկերության հիմնադիր Գարաբեդ Հարթունյանի անձնական, ընկերության մյուս մասնակիցների անձնական և ընկերության հետ առնչվող այլ անձանց ու ընկերությունների գումարները: Նարեգ Հարթունյանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող տան դիմաց 2010 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում ընկերության հաշվապահ Արթուր Գալստյանի միջոցով Սևակ Արզարունուն մասնա վճարված 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.770.600 ՀՀ դրամը եղել է ոչ թե ընկերության դրամարկղում չհաշվառված և հանցավոր ձանապարհով ստացված գումարներ, այլ Գարաբեդ Հարթունյանի անձնական գումարը և Նարեգ Հարթունյանն այդ գործարքով նպատակ չի ունեցել օրինականացնել հանցավոր ձանապարհով ստացված գումարներն ու այն փոխարկել անշարժ գույքի, իսկ Արթուր Գալստյանը նպատակ չի ունեցել այդ հարցում օժանդակել վերջինիս»:

Այսինքն, մեղադրողը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ

հողվածով ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանին և Արթուր Գալստյանին առաջադրված մեղադրանքները դատաքննությանը չեն հիմնավորվել և առկա են նրանց նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ:

Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում դատաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքը մեղադրողի կողմից վերացնելու ինստիտուտ. օրենսգրքի 3091-րդ հոդվածի համաձայն՝ դատաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքը մեղադրողի կողմից կարող է միայն լրացվել կամ փոփոխվել: Այսպիսով, սույն գործով մեղադրողի կողմից ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանին և Արթուր Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքների վերացումը դատարանը դիտում է, որպես մեղադրողի կողմից մեղադրանքներից հրաժարում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը կայացնում է արդարացնող դատավճիռ:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Նարեգ Հարթունյանին և Արթուր Գալստյանին պետք է արդարացնել, իսկ նրանց նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, պետք է վերացնել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35, 357, 359, 360 և 366 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Նարեգ Կարապետի Հարթունյանին արդարացնել:

Նարեգ Հարթունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Արթուր Արամի Գալստյանին արդարացնել:

Արթուր Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ԱԶԱՐՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	17-12-2013
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-01-2014
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	30-01-2014
Էջերի քանակ:	234
Էջերի քանակ:	323
Էջերի քանակ:	166
Էջերի քանակ:	210

Էջերի քանակ:	247
Էջերի քանակ:	360
Էջերի քանակ:	98
Էջերի քանակ:	295
Էջերի քանակ:	294
Էջերի քանակ:	277
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	